# ԺԹ. ԴԱՐՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ «ՍԷՐ» ՕԹԵԱԿԻ ԱՆԴԱՄ ԱԶԱՏ-ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑԱԿ

ԱՐԹՈՒՐ ՊԷՅԼԷՐԵԱՆ

Համազգայինի Հայագիտական Հանդէսի ԺԱ. հատորին մէջ յօդուած մը հրատարակած էինք Օսմանեան կայսրութեան մէջ ազատ որմնադրութեան ծագումին եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակի ստեղծումին եւ գործունէութեան վերաբերեալ¹։ Այժմ կը ներկայացնենք «Սէր» օթեակի, ասկէ քանի երեսուն տարիներու ընթացքին ունեցած անդամներու ընդհանուր ցուցակը, անոր հիմնումէն (1866) մինչեւ պաշտօնական գոցումը (1898)։ Անդամացանկը դասաւորած ենք այբբենական կարգով, ըստ մականուններու, Ֆրանսայի Մեծ Արեւելքի դիւաններուն մէջ պահուած զանազան փաստաթուղթերու համեմատ։ «Սէր» օթեակը ընդամէնը ունեցած է 168 անդամներ՝ 162 հայեր եւ 6 մահմետականներ՝ 5ը Թուրք ու մէկը Չերքէզ։

Ֆրանսայի Մեծ Արեւելքի դիւաններուն մէջ «Սէր» օթեակի վարչական խորհուրդի անդամներուն կողմէ պատրաստուած տարեկան ցուցակները, որոնք կ'ընդգրկեն 1866-1894ի ժամանակաշրջանը, երբ օթեակը անմնամասնաբար կը զարգացնէր իր գործունէութիւնը, չորս տարի նոյն ալ վերջնականացնելու փակելու համար, փոխանակ 28ի, 11 հատ են։ Առաջին ցուցակը 11 Մարտ 1868 թուականը կը կրէ, իսկ վերջինը՝ 3 Սեպտեմբեր 1887։ Այս ցուցակներուն մէջ կ'երեւին 162 անդամներու անունները։ Յարգելի օթեակներու վերաբերեալ դիւաններու մէջ գտանք նաեւ Յակոբ Հայրապետեանի եւ Թեւֆիք Պէյ անունով Թուրքի մը վերաբերեալ արձանագրութիւններ, որոնք կը փաստեն թէ անոնք նախապէս «Սէր» օթեակին ընծայուած (initiation) եղած են։ Այս պատճառաւ, մեր նախորդ յօդուածին մէջ «Սէր» օթեակի անդամներուն թիւը 164 հոգի ներկայացուցած էինք։ 1888ին գոցուած «Սէր» օթեակի հիմնադիր գերյարգելի վարպետ Սերովբէ Այնթապլեան Ֆրանսայի Մեծ Արեւելքի գերագոյն խորհուրդին կ'իմացնէր թէ «Արեւելքի Միութիւն» (Union d'Orient) օթեակի անդամներ տոքթ. Նահապետ Ռուսինեան, տոքթ. Միքայէլ Փորթուգալեան, տոքթ. Գրիգոր Մաղեան, Յովհաննէս Նուրեան, տոքթ. Ստեփան փաշա Ասլանեան, Ներսէս Պէյ Տատեան «Սէր» օթեակին միացած են։ Սակայն «Սէր» օթեակի վերջնական տասնամեայ տարեկան ցուցակը, վերոյիշեալ անձերէն տասնըհինգ չորսին անունները չի բերեր, ինչ որ կը նշանակէ, թէ տարի մը յետոյ այս անձերը դարձեալ հայկական օթեակէն բաժնուած են։ Այս չորս անձերուն անունները եւս մեր ցուցակին աւելցնելով անդամներու ընդհանուր թիւը 168ի կը հասնի։ Թերեւս կան մի քանի ուրիշներ ալ, որոնց անհնար եղաւ գտնել։ Մեր ցուցակին մէջ նշուած են խորագածներ ան-

դամի ծննդավայրը, ծննդեան թուականը, զբաղումը կամ արհեստը եւ «Սէր» օթեակին յանձնուելու թուականը։ Կարգ մը անդամներու մի միայն անունները արձանագրուած ըլլալով, անկարելի եղաւ յաւելեալ տեղեկութիւններ քաղել անոնց մասին՝ նոյնիսկ ուրիշ օթեակներու արձանագրութեանց մէջէն։ Նկատելի են նաեւ երկուութիւններ մեր նախորդ յօդուածին եւ այս ցուցակին մէջ նշուած կարգ մը տեղեկութիւններու վերաբերեալ, որոնք արդիւնք են բնագրային անճշդութիւններու։

Ինչպէս կը տեսնուի, անդամներուն մեծամասնութիւնը բնիկ պոլսահայեր կը բաղկանայ, որոնց կը հետեւին գաւառացի գաղութներ (Կեսարիայէն, Կարինէն, Իզմիթէն, Արաբկիրէն, Զմիւռնիայէն եւն.) ժամանակին Պոլիս հաստատուած աւելի քան 35 հոգի։ Անդամներուն մէջ վաճառականները եւ դրամատէրերը մեծամասնութիւն կը կազմեն, յետոյ կու գան ազատ ասպարէզի արհեստաւորներ՝ ոսկերիչներ ու ժամագործներ, 26 բժիշկ, որոնց երկուքը՝ զինուորական, 4 փաստաբան, պետական վարչակարգի զանազան բաժանմունքներու մէջ պաշտօնավարող անձեր՝ 21 հոգի, մէկ դատաւոր, մէկ լրագրող, մէկ ուսուցիչ, եւն.։

«Սէր» օթեակի հիմնադիր անդամները զանազանելու համար միւսներէն, անոնց անուններուն քով աստղանիշ մը աւելցուցած ենք։

«Սէր» օթեակի այս ցուցակին մէջ կը հանդիպինք ԺԹ. դարու Պոլսոյ հայ համայնքի ազգային, մշակութային, ընկերային թէ քաղաքական կեանքին մէջ դեր ստանձնած անձնաւորութիւններու անուններուն։ Անոնցմէ յիշենք տոքթ. Նահապետ Ռուսինեան (1819-1876), տոքթ. Բարունակ Պէյ Ֆէրուխան (1824-1868), «Մասիս» թերթի անդրանիկ-խմբագրապետ Կարապետ Իւթիւճեան (1822-1901), տոքթ. Գրիգոր Մաղեան (1830-1882), Ներսէս Պէյ Տատեան (1825-1872), որոնք Ազգային Սահմանադրութեան պատրաստութեան նախաձեռնարկ խումբին անդամներէն էին։ Մշակութային մարզին մէջ Զարթօնքի շրջանին գործօն դեր ունեցած տոքթ. Յովսէփ Շիշմանեան՝ Ծերենց (1822-1888), Մկրտիչ Պէշիկթաշլեան (1827-1868), թատերագիր Սրապիոն Հէքիմեան (1832-1892), ազգային կեանքի մէջ, մանաւանդ հայկական հարցի առնչութեամբ զանազան տարիներուն կարեւոր դեր ունեցած Գաբրիէլ Նորատունկեան (1852-1936), Ստեփան փաշա Ասլանեան (1822-1901), Յովհաննէս Նուրեան (1839-1899) եւ Յովսէփ Իսքէնտէր (1841-1927)։ Այս վերջինը ԺԹ. դարու 70ականներուն Փարիզ պիտի հաստատուէր եւ քաղաքական Ֆրանսայի մէջ հայկական հարցի ծանօթացման առաջին գործիչներէն մին պիտի ըլլար։ Յովսէփ Իսքէնտէր նաեւ Փարիզի Հայ Ազգասիրական Ընկերակցութեան հիմնադիրներէն էր (1890ին)։

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Ա. Պէշլէրեան, «Ազատ-Որմնադրութեան Մուտքը Օսմանեան Կայսրութիւն եւ Պոլսոյ Հայկական «Սէր» Օթեակը ԺԹ. Դարուն», Հայկազեան Հայագիտական Հանդէս, ԻԱ. Հատոր, Պէյրութ, 2001, էջ 143-182։

| Մականուն, Անուն | Ծննդավայր | թուական | Գործ/Արհեստ | Անդամակցութեան թուական |
|---|---|---|---|---|
| Ագնատուր Աբրաամ | Պոլիս | 1844 | հաշուակալ | 22.02.1866 |
| Ագնատուր Գէորգ | Պոլիս | 1842 | առեւտրական | 7.06.1866 |
| Ագնատուր Սերովբէ | Պոլիս | 1813 | առեւտրական | 28.02.1866 |
| Արամասեան Համբարձում | Եգիպտ | 1840 | վաճառական | 4.03.1869 |
| Արքի Էֆէնտի -------------- | Պոլիս | 1848 | գրագիր Ելմտական Տնօրէնութեան | 8.08.1875 |
| Ախանանցեան Խաչիկ | Պոլիս | 1805 | առեւտրական | 25.11.1867 |
| Ալէարճեան Գառնիկ | Պոլիս | 1840 | սեղանաւոր | 20.01.1881 |
| Ալթունեան Համբարձում | -------- | ------ | ----------------- | 26.09.1867 |
| Ալիշան Միքայէլ | Պոլիս | 1827 | առեւտրական | 28.08.1866 |
| Ալեքսանեան Տիրան | Պոլիս | 1814 | Ելմտական խորհրդոյ պաշտօնեայ | 28.02.1866 |
| Ատալէեան Կարապետ | Պոլիս | -------- | ատամնաբոյժ | 23.08.1866 |
| Աղջիկեան Գոզմա | Խոսրովա | 1817 | առեւտրական | 28.02.1866 |
| Ամպէրեան Աբրաամ | Պոլիս | 1848 | հաշուակալ | 20.01.1873 |
| Ամպէրեան Անտոն | Պոլիս | 1840 | վաճառական | 20.02.1873 |
| Անդրէասեան Մարտիրոս | Բիլէճիկ | 1844 | վաճառական | 18.05.1871 |
| Անտոնեան Մանուէլ | Պոլիս | 1842 | վաճառական | 16.12.1875 |
| Աշնանեան Մկրտիչ | Պոլիս | 1833 | դրամատէր | 4.10.1866 |
| Աշնանեան Նիկողոս | Պոլիս | -------- | դրամատէր | 11.03.1868 |
| Ասլանեան Յարութիւն | Թոքատ | 1851 | Ծովային Ընկերութեան պաշտօնեայ | 30.03.1879 |
| Ասլանեան Ստեփան | Պոլիս | 1822 | զինուորական բժիշկ | 28.02.1866 |
| Արապեան Սերովբէ | Ակն | 1834 | գործակալ | 18.05.1871 |
| Բալըմեան Կարապետ | Պոլիս | 1852 | առեւտրական | 23.01.1884 |
| Գազազեան Յակոբ | Կեսարիա | 1849 | դրամատէր | 16.07.1874 |
| Գազազեան Յովհաննէս | Կեսարիա | 1830 | առեւտրական | 3.02.1881 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Գաֆայեան Աշոտ | Պոլիս | 1843 | ուսուցիչ | 15.06.1871 |
| Գաֆայեան Մկրտիչ | Պոլիս | 1834 | ոսկերիչ | 19.12.1872 |
| Գամալիկ Պօղոս Բէյ | Պոլիս | 1838 | դրամատէր | 22.02.1866 |
| Գարախանեան Սեպուհ | Պոլիս | 1846 | ոսկերիչ | 13.02.1872 |
| Եազըճեան Յակոբ | Պոլիս | ------- | դրամատէր | 12.02.1868 |
| Եազմաճեան Կարապետ | Պոլիս | 1845 | վաճառական | 6.08.1874 |
| Եղուրզեան Գասպար | Պոլիս | 1834 | առեւտրական | 11.03.1868 |
| Եղուրզեան Պօղոս | Պոլիս | 1844 | գործակալ | 11.03.1868 |
| Երկանեան Գառնիկ | Պոլիս | 1850 | վաճառական | 7.07.1882 |
| Եուսուֆեան Տիգրան | Պոլիս | 1836 | դատաւոր Առեւտրական Դատարանի | 18.10.1866 |
| Զինճիրճեան Յարութիւն | Պոլիս | 1835 | վաճառական | 15.10.1868 |
| Էնգիւրճեան Պօղոս | Պոլիս | 1847 | սեղանաւոր | 20.03.1880 |
| Էրամ Միքայէլ | Պոլիս | 1833 | առեւտրական | 9.08.1866 |
| Էֆիգեան Գալուստ | Զմիւռնիա | 1837 | առեւտրական | 2.03.1866 |
| Էքմէքճեան Յարութիւն | Պոլիս | 1823 | վաճառական | 18.05.1871 |
| Ընծայապեան Միքայէլ | Կեսարիա | 1831 | վաճառական | 12.05.1870 |
| Թագւորեան Գէորգ | Պոլիս | 1820 | բժիշկ | 29.11.1866 |
| Թաշճեան Միսաք | Կեսարիա | 1856 | դրամատէր | 30.03.1879 |
| Թէվֆիք Պէյ ------- | ------------- | ------ | պաշտօնեայ Եղմտ. Տնօրէնութեան | ------------- |
| Թիրաքեան Սեպուհ | Պոլիս | 1843 | առեւտրական | 19.11.1874 |
| Թորամանեան Մանուկ | Գարահիսար | 1849 | առեւտրական | 22.01.1881 |
| Թօքաթլեան Գասպար | Պոլիս | 1840 | Արտ. գործոց Նախ. պաշտօնեայ | 18.09.1873 |
| Թօքաթլեան Մկրտիչ | Պոլիս | 1863 | ճաշարանատէր | 23.01.1887 |
| Թորոս Պէյ Գիւլակ | Պոլիս | 1825 | Ծովային Նախարարութեան թարգման | 22.02.1866 |
| Իսկէնտէր Միքրոն | Պոլիս | 1837 | առեւտրական | 19.03.1867 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Իսկէնտէր Յովսէփ | Պոլիս | 1841 | առեւտրական | 22.02.1866 |
| Իւթիւճեան Կարապետ | Պոլիս | 1823 | լրագրող | 22.02.1866 |
| Խիտտավերտեան Գառնիկ | Պոլիս | 1833 | առեւտրական | 23.05.1872 |
| Խիտտավերտեան Նիկողոս | Պոլիս | 1830 | ճտտագործ | 21.11.1872 |
| Խորասանեան Գրիգոր | ------- | ------ | ------------ | 2.03.1866 |
| Խօրասանճեան Միքայէլ | Պոլիս | ------ | Կայսերական Պալատի բժիշկ | 1866 |
| | | | | |
| Կարապետեան Ազատիկ | Ակնէ (Իզմիտ) | 1843 | վաճառական | 8.02.1883 |
| Կրճիկեան Անդրանիկ | Պոլիս | 1822 | բժիշկ | 20.09.1866 |
| Կիլլապեան Միքայէլ | Պոլիս | 1851 | Բ. Դրան պաշտօնեայ | 27.01.1878 |
| Կիւլպէնկեան Կիւլպէնկ | Կեսարիա | 1834 | առեւտրական | 17.09.1869 |
| Կիւմիւշեան Խաչիկ | Պոլիս | 1842 | խաշտակալ | 19.05.1870 |
| Հազարապետեան Յակոբ | Էրզրում | 1870 | առեւտրական | ------------ |
| Հէքիմեան Սրապիոն | Մեծ Կոզի (Պոլիս) | 1832 | խաշտակալ-ատտցիչ | 22.02.1866 |
| | | | | |
| Հինտի Հաճի Հասան | Պօմպէյ | 1840 | վաճառական | 5.09.1875 |
| Հովեան Ղազարոս | Պոլիս | 1838 | ոսկերիչ | 7.02.1867 |
| Ղազարեան Զաքար | Արաբկիր | 1827 | դրամատէր | 4.03.1869 |
| Ղազարոսեան Սահակ | Պոլիս | 1836 | առեւտրական | 6.09.1866 |
| Ճէլալի Յակոբ | Պոլիս | 1855 | Համբայրին Պարտուց Վարչութեան պաշտօնեայ | 7.07.1882 |
| | | | | |
| Ճէմալ Պէյ--------- | Պոլիս | 1838 | դատաւոր | 7.01.1871 |
| Ճիլաճեան Տիգրան | Պոլիս | 1851 | ոսկերիչ | 13.02.1883 |
| Մազլումեան Համբարձում | Պոլիս | 1833 | դրամատէր | 1.02.1874 |
| Մակարեան Խաչիկ | Պոլիս | 1833 | վաճառական | 19.05.1870 |
| Մամասեան Առաքել | Արաբկիր | 1822 | դրամատէր | 22.01.1868 |
| Մանիսալեան Խաչիկ | Պոլիս | 1844 | Կայսերական Պալատի պաշտօնեայ | 4.05.1871 |
| | | | | |
| Մարկոսեան Բարսեղ | Պոլիս | ------- | դրամատէր | 7.06.1866 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մարտունեան Միքայէլ | Պոլիս | 1845 | Արտ. Գործոց Նախարարութեան պաշտօնեայ | 30.03.1867 |
| Մարտունեան Յարութիւն | Պոլիս | 1844 | դրամատէր | 27.12.1866 |
| Մարտունեան Սիմոն Պէյ | Պոլիս | 1836 | Կայսերական Պալատի հայթայթիչ | 21.02.1867 |
| Միհրեան Գարեգին | Պոլիս | 1844 | փաստաբան | 6.08.1874 |
| Մէրճէմ-Գուլի Յարութիւն | Պոլիս | 1840 | առեւտրական | 19.11.1876 |
| Մինասեան Աւետեան | Միխոտէ | 1857 | վաճառական | 22.07.1876 |
| Միսաքեան Յովհաննէս | Մեծ Կողի (Պոլիս) | -------- | ճարտարապետ | 24.01.1867 |
| Միսաքեան Ստեփան վ. | Պոլիս | 1841 | դրամատէր | 1.11.1866 |
| Միքայէլեան Կարապետ | Արաբկիր | 1845 | դրամատէր | 16.07.1874 |
| Միւհէնտիսեան Մարտիրոս | Պոլիս | 1821 | դրամատէր | 22.02.1866 |
| Մսերեան Սարգիս | Զմիւռնիա | 1837 | վաճառական | 13.02.1872 |
| Մազեան Գրիգոր | Խասգիւղ (Պոլիս) | 1830 | բժիշկ | 1866 |
| Յակոբեան Յովհաննէս | Պոլիս | 1856 | փաստաբան | 20.01.1881 |
| Յարութեան Առաքել | Պոլիս | 1827 | դրամատէր | 22.04.1868 |
| Յովակիմեան Մինաս | Ակն | 1844 | առեւտրական | 29.03.1872 |
| Յովակիմեան Յովակիմ | Պոլիս | 1847 | վաճառական | 29.02.1872 |
| Յովսէփեան Արշակ | Էրզրում | 1852 | վաճառական | 25.09.1885 |
| Յովսէփեան Կարապետ | Պոլիս | 1839 | վաճառական | 18.03.1877 |
| Նախշիկեան Անտոն | Գարահիսար | 1857 | վաճառական | 17.06.1885 |
| Նեմրազեան Յարէթիւն | Պոլիս | 1834 | առեւտրական-բարեգործ | 2.03.1866 |
| Նեմրազեան Յովակիմ | Պոլիս | 1831 | առեւտրական | 22.02.1866 |
| Նիկիտեան Սմբատ | Գարահիսար | 1845 | վաճառական | 19.02.1880 |
| Նշկեան Յակոբ | Էրզրում | 1853 | չանի | 19.02.1880 |
| Նորատունկեան Գաբրիէլ | Պոլիս | 1852 | իրաւագէտ Բ. Դրան | 19.11.1876 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Նորատունկեան Յարութիւն | Պոլիս | 1845 | առեւտրական | 22.02.1866 |
| Նորիկեան Պետրոս | Պոլիս | 1830 | առեւտրական գործակալ | 4.03.1869 |
| Նուրեան Յովհաննէս | Պոլիս | 1839 | պետական պաշտօնեայ | 1866 |
| Շահինեան Յովհաննէս | Պոլիս | 1842 | Լոյտ ընկերութեան պաշտօնեայ | 25.09.1867 |
| Շէֆիք Պէյ | Պոլիս | 1848 | գրագէտ | 30.10.1875 |
| Շիշմանեան Յովսէփ | Պոլիս | [1822] | բժիշկ | 2.03.1866 |
| Շիրանեան Վէնսան | Պոլիս | 1826 | առեւտրական | 22.02.1866 |
| Շնորհքեան Յովհաննէս | Պոլիս | 1816 | առեւտրական | 23.08.1866 |
| Չայեան Եղիա | Պոլիս | 1840 | պետական պաշտօնեայ | 22.02.1866 |
| Չարազլեան Յակոբ | Պոլիս | | առեւտրական | 12.07.1866 |
| Չօպանեան Միհրան | Պոլիս | 1842 | ոսկերիչ | 13.11.1873 |
| Պալիոզեան Լուօֆէր | Թալաս (Կեսարիա) | 1849 | առեւտրական | 25.01.1874 |
| Պաղտասարեան Էրամ | Պոլիս | 1827 | ժամագործ | 30.05.1867 |
| Պաղտասարեան Միգան | Պոլիս | 1842 | հեռագրատան պաշտօնեայ | 22.07.1868 |
| Պապայեան Եղիա | Պոլիս | 1828 | առեւտրական | 29.11.1866 |
| Պարճաեան Պօղոս | Արաբկիր | 1841 | Մամլոյ Գրասենեակի փոխ-տնօրէն | 12.07.1866 |
| Պարոնեան Նիկողոս | Պրուսա | 1850 | պաշտօնեայ | 19.02.1880 |
| Պարտիզպանեան Թագւոր | Պոլիս | 1845 | դրամատէր | 14.02.1868 |
| Պէհլիվանեան Յովսէփ | Պոլիս | 1844 | պաշտօնեայ | 13.12.1885 |
| Պեյլիրճեան Մարգար | Պոլիս | 1824 | վաճառական | 9.08.1866 |
| Պենտերլեան Մկրտիչ | Պոլիս | 1837 | փորագրիչ | 21.03.1867 |
| Պէշիկթաշլեան Մկրտիչ | Պոլիս | [1827] | բանաստեղծ | 21.03.1867 |
| Պէշիրեան Միգան | Պոլիս | 1840 | ժամագործ | 18.10.1866 |
| Պէշիրեան Սահակ | Պոլիս | 1835 | դրամատէր | 4.03.1869 |
| Պէրպէրեան Գրիգոր | Պոլիս | 1840 | ոսկերիչ | 4.05.1871 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պէշթիմալճեան Պօղոս | Պոլիս | 1847 | դրամատէր | 19.11.1874 |
| Պօլկուրեան Ռուբէն | Պոլիս | 1836 | փաստաբան | 23.08.1866 |
| Պոյաճեան Յովհաննէս | Պոլիս | 1831 | դրամատէր | 7.02.1867 |
| Պոյաճեան Նշան | Պոլիս | 1850 | փաստաբան | 20.05.1880 |
| Ռափայէլեան Միքայէլ | Պոլիս | 1833 | բժիշկ | 23.08.1866 |
| Ռէֆիք Սեմէռ | Պոլիս | 1852 | առեւտրական | 23.10.1873 |
| Ռուսինեան Նահապետ | Էվէրէկ (Կեսարիա) | 1819 | բժիշկ | 1866 |
| Սարաֆեան Յարութիւն | Պոլիս | 1836 | Կրթական Նախարարութեան քարտուղար | 22.02.1866 |
| Սեղբոսեան Սիմոն | Պոլիս | 1851 | բժիշկ | 16.07.1874 |
| Սըզմաճեան Մովսէս | Աֆիոն-Գարահիսար | 1851 | վաճառական | 30.10.1875 |
| Սրաճպուլեան Յարութիւն | Կեսարիա | 1842 | դրամատէր | 16.07.1874 |
| Սրաճպուլեան Յովակիմ | Կեսարիա | 1847 | առեւտրական | 16.07.1874 |
| Սիմոնովիչ Սիմոն | Պոլիս | 1834 | Օսմ. Դրամատան պաշտօնեայ | 31.05.1866 |
| Սիմոնեան Տիգրան | Պոլիս | 1844 | պաշտօնեայ | 18.10.1866 |
| Սիւրեան Աւետիս | Ատանա | 1853 | Ատանայի Քաղաքապետութեան թարգման | 23.10.1881 |
| Սփաճեան Սարգիս | Էռզրում | 1842 | գործակալ | 19.05.1870 |
| Վասըֆ Էֆէնտի | Պոլիս | 1851 | գրագիր Երկր. Նախարարութեան | 23.04.1876 |
| Տօմասեան Մկրտիչ | Պոլիս | 1836 | առեւտրական | 20.09.1866 |
| Տատեան Ներսէս Պէյ | Պոլիս | 1825 | Պոլսոյ Ոստիկանական խորհուրդի անդամ | 2.03.1866 |
| Տատեան Ղազարոս | Պոլիս | 1828 | քաղաքական համայնքի ազգապետ | 7.02.1866 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տէր Միքայէլեան Մինաս | Արաբկիր | 1840 | վաճառական | 18.09.1873 |
| Տէրվիշեան Յարութիւն | Պոլիս | 1838 | առեւտրական | 22.04.1868 |
| Տէր Ներսէսեան Միհրան | Էրզրում | 1855 | առեւտրական | 7.07.1882 |
| Տէրտէնեան Կարապետ | Էտիրնէ | 1843 | պաշտօնեայ | 18.05.1871 |
| Տէրտէնեան Յակոբ | Էտիրնէ | 1832 | առեւտրական | 5.05.1881 |
| Փափազեան Անդրէաս | Պոլիս | 1828 | ոսկերիչ | 17.09.1869 |
| Փափազեան Առաքել | Ռոտոսթօ | 1841 | առեւտրական | 17.12.1868 |
| Փափազեան Գաբրիէլ | Մուսուլ | 1828 | դրամատէր | 15.11.1868 |
| Փափազեան Երուանդ | Պոլիս | 1841 | վաճառական | 15.04.1869 |
| Փափազեան Լեւոն | Պոլիս | 1860 | դրամատան փոխ տնօրէն | 26.05.1886 |
| Փափազեան Կարապետ | Պոլիս | 1830 | դրամատէր | 22.04.1868 |
| Փափազեան Յարութիւն | Պոլիս | 1842 | դրամատէր | 19.11.1868 |
| Փափազեան Տիմոթէոս | Պոլիս | 1842 | ժամագործ | 12.02.1868 |
| Փափազեան Վարդան | --------- | ------- | ------------------------ | 2.03.1866 |
| Փիշմիշ Մկրտիչ | Պոլիս | 1826 | առեւտրական | 2.03.1866 |
| Փշիկեան Պետրոս | Ակն | 1838 | պաշտօնեայ | 4.07.1872 |
| Քէհեայեան Մարտիրոս | Պոլիս | 1836 | առեւտրական | 9.08.1866 |
| Քէհեայեան Գրիգոր | Պոլիս | 1832 | Օ. Դրամ պաշտօնեայ | 12.07.1866 |
| Քիրեսէճեան Յովհաննէս | Պոլիս | 1840 | պաշտօնեայ | 20.05.1880 |
| Քիրեան Եանիկ | Պոլիս | 1858 | բժիշկ | 13.03.1884 |
| Քիւստանփօրեան Յարութիւն | Պոլիս | ------- | տպարանատէր | 11.03.1868 |
| Քօչեան Անտոն | Պոլիս | 1830 | դրամատէր | (1866) |
| Քրամեան Միքայէլ | Պոլիս | 1855 | պաշտօնեայ | 20.05.1880 |
| Օրագեան Մինաս | Պոլիս | 1822 | ------------------ | 7.06.1866 |
| Ֆէրուխեան Բարոնեան Պէյ | Պոլիս | 1824 | զինուորական բժիշկ | 22.02.1866 |

## THE COMPLETE LIST OF THE ARMENIAN MEMBERS OF THE *SER* LODGE IN CONSTANTINOPLE

(Summary)

ARTHUR BEYLERIAN

As an addendum to his article published in Volume 21 of the *Haigazian Armenological Review* on Armenian freemasons in the Ottoman Empire in the nineteenth century and the Armenian *Ser* (Love) Lodge in Constantinople, Arthur Beylerian has compiled an updated list of all 168 members of this lodge, after having searched through the reports and other documents sent by the lodge to its headquarters in Paris.

The list comprises 162 Armenians and six Muslims. Most of the Armenians were born in Constantinople, while some 35 members on this list were born in the provinces. A number of renowned Armenian intellectuals were members of this lodge, including some of the pioneers of the Armenian National Constitution adopted in the Ottoman Empire in 1863. Other members were active in literary, theatrical and other walks of Armenian life. Most members were merchants, financiers, goldsmiths and watch-makers by profession. There were also 24 physicians.